Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
դեկտեմբերի 24 -ի N 949 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՋԻԼ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 23 ՏՆԵՐԻ ՄԱՄՆԱԿԻ ՆՈՐՈԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջիլի համայնքի 23 ընտանիքի տների տանիքների հիմնանորոգում և նոր պատուհանների տեղադրում: Համայնքի բնակարանային պայմանների բարելավում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամ: Երևան, Կարապետ Ուլնեցու 14 ԱՄՆ-ի «Հայ օգնության և աջակցման ընկերակցություն (ARDA)» շահույթ չհետապնդող կազմակերպություն
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ: Քաղաքաշինության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	47,000,000 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջիլի համայնքի սոցիալապես անապահով 23 ընտանիք, որոնք 1989 թվականին Հայաստան են տեղափոխվել Ադրբեջանից: Ընտանիքների ընտրությունը կատարվել է «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի ընտանիքների ընտրության հանձնախմբի առաջարկությամբ՝ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առավել կարիքավոր ընտանիքներից:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Շինարարական նյութերի տրամադրում և աշխատանքների իրականացում՝ 01.02.2020 թ.-30.12.2020 թ., 47,000,000 դրամ
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Մետաղապլաստե պատուհաններ՝ 327 քառ. մ - 9,483,000 դրամ Պատուհանագոգեր՝ 277 քառ. մ – 1,246,500 դրամ Տանիքի թիթեղ՝ 6205 քառ. մ - 14,892,000 դրամ Փայտանյութ՝ 92 խոր. մ - 11,776,000 դրամ Այլ շինարարական նյութեր, գործիքներ՝ 302,500 դրամ Շինարարական աշխատանքների իրականացում՝ 9,300,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: Ծրագիրն իրականացվելու է հիմնադրամի ընդհանուր ծախսերի հաշվին:
12.	Համագործակցությունը պետական կառա-վարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ